

## **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13/2**

**14 հունիսի 2016թ.**

Քննարկվեց «Գալտ Գրուպ» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 07.04.2016թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 318935/01 որոշման դեմ:

#### **«Գալտ Գրուպ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

Գանգատաբերը նշում է, որ 03.09.2015թ-ին «Գալտ Գրուպ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերության) կողմից իրականացվել է ոչ թե արտահանման գործարք, այլ՝ ներմուծման: Ընդ որում, նշված ներմուծման հետ կապված սահմանված կարգով և ժամկետում հարկային մարմին է ներկայացվել ներմուծման հայտարարագիր:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է չեղարկել ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 07.04.2016թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 318935/01 որոշումը:

#### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննելով 25.03.2016թ. թիվ 1536 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը պարզել է, որ «Գալտ Գրուպ» ՍՊԸ տնօրեն Գուրգեն Բաբայանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ-ի սեպտեմբեր ամսվա արտահանման հարկային հայտարարագիրը: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 07.04.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 318935/01 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որով Գուրգեն Բաբայանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ 01.09.2015թ-ի թիվ 652 հաշիվ ապրանքագրով «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ն Ռուսաստանի Դաշնությունում գործունեություն իրականացնող «Ատոմ Սվետ» ՍՊԸ-ից ձեռք է բերել ընդհանուր գումարով 69.635.00 ՌԴ ռուբլու ապրանքներ, որոնք «Ալեքսիբսերվիս» կազմակերպության կողմից ուղարկվել են ք.Երևան, իսկ ապրանքների ստացողը հանդիսացել է «Գալտ Գրուպ» ՍՊԸ տնօրեն Գուրգեն Բաբայանը: Ապրանքները ստացվել են 03.09.2015թ-ին:

Վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են, որ 03.09.2015թ-ին «Գալտ Գրուպ» ՍՊԸ կողմից իրականացվել է ապրանքների ներմուծում: Ինչ վերաբերվում է 03.09.2015թ-ին «Գալտ Գրուպ» ՍՊԸ կողմից արտահանում իրականացված լինելուն, ապա այդ հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց սույն գործում առկա չէ:

Քննարկվող դեպքում «Գալտ Գրուպ» ՍՊԸ տնօրեն Գուրգեն Բաբայանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում 2015թ-ի սեպտեմբեր ամսվա համար արտահանման հարկային հայտարարագիր չներկայացնելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության, այն դեպքում, երբ գործում առկա չէ որևէ ապացույց, որը կհիմնավորեր «Գալտ Գրուպ» ՍՊԸ կողմից 03.09.2015թ-ին արտահանում իրականացված լինելու հանգամանքը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը՝

### ո Ր Ո Ղ ՈՒ Մ Է՝

Բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 07.04.2016թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 318935/01 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ